

246B

Թիւ 24489
Մարտ 10, 1975

Արժանաշնորհ
Տ. Աոնակ Քհնյ. Գասպարեան
Հովիւ Ս. Թովմաս Եկեղեցւոյ
Նախագահ ծխական Խորհուրդի
Թէնէֆլայ, Ն.Ճ.

Սիրելի Տէր Աոնակ,

Ստացած ենք ծխական Խորհուրդիդ Ասենապետին Փետրուար 26, 1975
թուակիր տեղեկագիրը, որով կը հաղորդուի թէ Ձեր նախագահութեամբ
Փետրուար 2ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած
է ծխական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացուելով
քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրուի ընտրուած անձերու վաւերաց-
ման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ծխական ժողովը տեղի ունեցած է Թեմական
Վանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ծխա-
կան Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ արուած ցանկին:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԷԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Ֆրանք Աւագեան-Սթոնսըն
Արմենակ Իսքէնտէրեան
Մայքըլ Իզմիրլի
Փիթըր Մէյսըն
Լեւոն Նիկողոսեան
Արթըր Օշի